Ջատագովության համառոտագիր

«Քաղաքացիական հասարակության կողմից ՀԸԳՀ իրականացման մոնիթորինգի ուժեղացում (ՀԸԳՀ 52-րդ հոդվածի «a» և «b» կետերի, 54-րդ հոդվածի «b», «c», «d», «e» և «f» կետերի մոնիթորինգ)»

Ուսումնասիրությունը շեշտը դնում է ինչպես ազգային, այնպես էլ տեղական մակարդակներում կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության մասին ՀԸԳՀ հոդվածների դրույթների իրականացման մոնիթորինգի վրա, բացահայտում է սահմանված կլիմայական թիրախներին հասնելու ճանապարհին առկա խոչընդոտները, գնահատում է պետական քաղաքականությունների տեղայնացումը և ներկայացնում է թիրախավորված առաջարկություններ բացահայտված խոչընդոտները հաղթահարելու համար:

14 իրավական ակտերում հայտնաբերվել են բացթողումներ, և մշակվել են այդ բացթողումները հաղթահարելու առաջարկություններ: Ընտրվել են ոլորտային ուղղություններ: Յուրաքանչյուր ոլորտի ուսումնասիրության ցուցանիշներն ընտրվել են որպես ոլորտի զարգացումը բնութագրող հիմնական ցուցանիշներ:

Անտառային ոլորտ

1. Առաջարկություն ԵՄ-ին՝ աջակցել Հայաստանին անտառային տարածքների գույքագրման գործում, որպեսզի այս ցուցանիշները կարողանան օգտագործվել որպես ելակետային ցուցանիշներ անտառների ոլորտի թիրախները սահմանելու և իրականացվող աշխատանքները գնահատելու համար, քանի որ ներկայում օգտագործվող տվյալները հնացած են՝ թվագրվում են 1993 թվականով:
2. Առաջարկություն ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը՝ անտառային ոլորտի ռազմավարությունը ներառելով մշակվող «Շրջակա միջավայրի զարգացման ռազմավարության» մեջ՝ սահմանել իրատեսական գործողություններ, քանի որ մինչև 2025 թվականը Հայաստանի Հանրապետության 2023-2030 ԱՍԳ-ով նախատեսված 50,000 հեկտար անտառից տնկվել է ընդամենը մոտ 1,64%-ը:

Գյուղատնտեսության ոլորտ

3. Առաջարկություն ԵՄ-ին՝ առաջնորդվելով ՀԸԳՀ-ի 52-րդ հոդվածով՝ աջակցել Հայաստանին նոր հակակարկտային տեխնոլոգիաների ներդնման գործում, քանի որ հակակարկտային համակարգերն անարդյունավետ են: Ներկայում կարկտապաշտպան ցանցերն օգտագործվում են բացառապես ինտենսիվ պտղատու այգիների համար՝ ծածկելով դրանց 22,32%-ը:
4. Առաջարկություն ՀՀ կառավարությանը՝ ապահովել գյուղատնտեսական նշանակության հողերի ապահովագրության համակարգի կարողությունների զարգացումը, ինչը հնարավորություն կտա ավելացնել ապահովագրված հողերի մակերեսը և ապահովագրվող մշակաբույսերի բազմազանությունը, քանի որ հաշվետու ժամանակահատվածում գյուղատնտեսական նշանակության հողերի ապահովագրության ծածկույթը չափազանց ցածր էր՝ 2024թ. հասնելով ընդամենը 0,05%-ի:

Էներգետիկայի ոլորտ

5. Առաջարկություն ԵՄ-ին՝ ԵՄ դիրեկտիվներում ներառել «էներգետիկ աղքատության» չափման հստակ ցուցանիշներ և մշակել դրա հաղթահարմանն ուղղված գործիքակազմ: Ցուցանիշների բացակայությունը խոչընդոտում է կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած էներգետիկ աղքատության գնահատմանը:

Թափոնների կառավարման ոլորտ (պինդ թափոնների կառավարում, կեղտաջրեր)

6. Առաջարկություն ՀՀ կառավարությանը՝ նոր մշակված ՀԸԳՀ ճանապարհային քարտեզում հստակ մեխանիզմներ նախատեսել ՀԸԳՀ հավելված 3-ի «Թափոնների կառավարում» բաժնի միջոցառումների իրականացման համար: Ոլորտի խնդիրները լուծելու համար ընդունել կեղտաջրերի հեռացման ոլորտի զարգացման ծրագիր: 2021թ. Հայաստանում գոյացել է տարեկան 310 միլիոն մ³ քաղաքային կեղտաջուր, որից 91,94%-ը չի մաքրվել, 7,93%-ն անցել է մեխանիկական մաքրում և միայն 0,13%-ն է ենթարկվել կենսաբանական մաքրման: Այս միտումը շարունակական բնույթ ունի: 580 բնակավայրերում կոյուղու համակարգեր չկան:

Համայնքներ

7. Առաջարկություն համայնքներին՝ կատարել կլիմայական ռիսկի գնահատում և մշակել կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության գործողությունների ծրագիր կամ ռազմավարություն, քանի որ համայնքի ներգրավվածությունը պետական կլիմայական քաղաքականության մեջ ցածր է:

Փորձագետ Վիկտորյա Բուռնազյան | vicaburnazyan@gmail.com

Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության պատասխանատվությունը կրում է բացառապես հեղինակը՝ Վիկտորյա Բուռնազյանը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները: